600.0031.10.03.06

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մարտի 2006 թվականի №31Ա

քաղ. Երևան

ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԲԱՇԽՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, 21-րդ, 22-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2003 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու մասին» №1Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝
   ա) գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը՝ 15.025 դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 18.030 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը, փոխադրված յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի համար.
   բ) բաշխված յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի բաշխման սակագինը՝ 4966.014 դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 5959.217 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2004 թվականի հունվարի 29-ի «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության սակագնի սահմանման մասին» №17Ա, «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բնական գազի բաշխման գործունեության սակագնի սահմանման մասին» №18Ա և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2004 թվականի հունվարի 29 -ի №17Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու

մասին» №83Ա, «Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2004 թվականի հունվարի 29-ի №18Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» №84Ա որոշումները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում է 2006 թվականի ապրիլի 10-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱՁԱՐՅԱՆ

ք. Երևան
10 մարտի 2006թ.